ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Սլովենիայի Հանրապետություն (Անկարան) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**

   Մերի Գասպարյան

   Արևիկ Ստեփանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   Մերի Գասպարյան, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ,

   Արևիկ Ստեփանյան, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության երեխաների հիմնահարցերի բաժնի պետի պարտականությունները ժամանակավոր կատարող, նույն բաժնի գլխավոր մասնագետ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Սլովենիայի Հանրապետություն, 2025 թվականի սեպտեմբերի 22-ից սեպտեմբերի 30-ը

4. **Հրավիրող կողմը.**

   Սլովենիայի «Մարդու անվտանգության խթանում» (ITF) կազմակերպություն

5. **Գործուղման նպատակը.**

   Մասնակցություն «Երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնում Սլովենիայում» սոցիալական աջակցության ծրագրին՝ որպես ծրագրի շրջանակում Սլովենիա մեկնող երեխաներին ուղեկցող:

   Ծրագիրն իրականացվել է Սլովենիայի «Մարդու անվտանգության խթանում» (ITF) կազմակերպության, Սլովենիայի արտաքին և եվրոպական հարցերի նախարարության և ԵԱՀԿ-ում Ավստրիայի մշտական ներկայացուցչության աջակցությամբ:

   Ծրագրի շրջանակում Սլովենիա մեկնած խմբում ընդգրկված էր 16 երեխա Արարատի մարզից՝ 44-օրյա պատերազմի ընթացքում զոհված, վիրավորում ստացած զինծառայողների, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքներից:

   Ծրագրի նպատակն էր երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնումը՝ Սլովենիայի Կարմիր խաչի առողջության և երիտասարդության հանգստավայրում՝ Դեբելի Ռտիչում:

6. Քննարկված թեմաները.

Երեխաների համար նախատեսված վերականգնողական ծրագիրը ներառում էր տարբեր միջոցառումներ, կրթական և ուսուցողական ծրագրեր: Մասնավորապես, իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

- լողի իմացության ստուգում և լողի դաս հրահանգիչների ուղեկցությամբ
- սոցիալ-հոգեբանական վերականգնմանն ուղղված խաղեր և վարժանքներ
- շրջայց առողջարանում և այգում, ծովափի ուսումնասիրում և ծանոթացում «Կախարդական պուրակին»
- նետաձգություն,
- էքսկուրսիա դեպի ծովափնյա քաղաք Պիրան, այցելություն ակվարիում, շրջայց քաղաքում
- այցելություն Անկարան քաղաքի տեղի հիմնական դպրոց
- հանդիպում անասնաբույժ-բնապահպանի հետ
- ծանոթացում իստրիական ավանդական երաժշտության հետ
- իստրիական ձիթաբլիթների պատրաստում Ռոզանա Պրեշերենի հետ
- բացօթյա խաղեր՝ ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, ինչպես նաև երեկոյան միջոցառումներ ճամբարում հանգստացող սլովենացի երեխաների հետ միասին:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Սեպտեմբերի 25-ին երեխաների հետ հանդիպման էին եկել Սլովենիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Հովակիմյանը՝ տիկնոջ հետ, Սլովենիայի «Մարդու անվտանգության խթանում» կազմակերպության ներկայացուցիչները և ծրագրի պատասխանատու Նատաշա Ուրշիչը, Սլովենիայի արտաքին և եվրոպական հարցերի նախարարության ներկայացուցիչը, Դեբելի Ռտիչ առողջարանային համալիրի ղեկավար կազմը: Հյուրերը շփվեցին երեխաների հետ, լսեցին վերջիններիս տպավորությունները: Հանդիպումը եզրափակվեց խմբային լուսանկարահանմամբ:

Սեպտեմբերի 29-ին երեխաներն այցելեցին Անկարան քաղաքի հիմնական դպրոց, որը միակն է 4 համայնքներում՝ Անկարան, Կոպեր, Պիրան, Իզոլա, և ունի 250 աշակերտ: Խմբին հյուրընկալած դպրոցի տնօրենի ուղեկցությամբ կազմակերպվեց շրջայց դպրոցում, տնօրենը պատասխանեց երեխաների հարցերին: Ուշագրավ է, որ Սլովենիայում անցկացվել է հետազոտություն՝ վերհանելու սմարթֆոնների բացասական ազդեցությունը երեխաների վրա, որի արդյունքը ցույց է տվել, որ երեխաները կարդացած տեքստն ընկալելու խնդիրներ են ունենում: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ դպրոցում

արգելված է հեռախոսների օգտագործումը, դրանք դրվում են հատուկ պահարանների մեջ՝ մինչև դասերի ավարտը:

Սլովենիա այցը լուսաբանվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Որոշումներ չեն ընդունվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Փոխհամաձայնության դեպքում՝ առաջարկվում է շարունակել սլովենական կողմի հետ համագործակցությունը սույն ծրագրի շրջանակում՝ հաշվի առնելով երեխաների համար սոցիալ-հոգեբանական վերականգնում անցնելու, ինչպես նաև սլովենական մշակույթին ու պատմությանը, տեսարժան վայրերին ծանոթանալու, միաժամանակ նաև՝ հյուրընկալող կողմին Հայաստանի մշակույթն ու պատմությունը, ազգային արժեքները ներկայացնելու հնարավորության կարևորությունը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Մերի Գասպարյան
Արևիկ Ստեփանյան

07.10.2025